N	Ծրագրային միջոցառումների անվանումը	2014թ.	2015թ.	2016թ.	2017թ.
1.	Առևտրի և ծառայությունների ոլորտի օրենսդրական դաշտի կատարելագործման նպատակով առաջարկությունների ներկայացում, այդ թվում ուղղված շրջիկ առևտրի կանոնակարգմանը, ինչպես նաև հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում գործունեության կանոնների մշակում:	+	+	+	+
2.	Առևտրի և ծառայությունների ոլորտում համակարգված և արդյունավետ հսկողության իրականացում:	+	+	+	+
3.	Բացօթյա առևտուրի նկատմամբ անհրաժեշտ հսկողության իրականացում և կանոնակարգում: Երևան քաղաքում բացօթյա ապօրինի առևտրի արգելում և վերացում:	+	+	+	+
4.	Երևան քաղաքի վարչական շրջաններում շաբաթ, կիրակի և տոնական օրերին գյուղատնտեսական արտադրանքի, սպառողական ապրանքների շուկաների, տոնավաճառների կազմակերպում:	+	+	+	+
5.	Մասնավոր ներդրումների հաշվին գյուղմթերքի փոքրածավալ շուկաներ ստեղծելու նպատակով դրանց տեղակայման վայրերի որոշում, քաղաքաշինական փաթեթի մշակում և կառուցում:	+	+	+	+
6.	Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարների կողմից տրված ոգելից խմիչքների և ծխախոտի վաճառքի ու իրացման, հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի, թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի առուվաճառքի, բացօթյա առևտրի կազմակերպման, վարչական շրջանների տարածքներում առևտրի, հանրային սննդի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, բաղնիքներին /սաունաներին/, խաղատներին ժամը 24.00–ից հետո աշխատելու թույլտվությունների տրման, տեղական տուրքերի վճարումների ուղղությամբ հսկողության իրականացում:	+	+	+	+
7.	Առևտրի օբյեկտներում պիտանիության ժամկետն անցած ապրանքների վաճառքի դեպքերը հայտնաբերելու, արգելելու և կանխարգելելու ուղղությամբ անհրաժեշտ միջոցառումների իրականացում:	+	+	+	+
8.	Ստորգետնյա անցումներում իրականացվող առևտրի նկատմամբ հսկողության իրականացում և կանոնակարգում:	+	+	+	+
9.	Մասնավոր ներդրումների հաշվին հասարարական զուգարաններ կառուցելու նպատակով				

	քաղաքաշինական փաթեթի մշակում և կառուցապատողներին ծրագրային փաթեթների օտարում՝ աճուրդային կամ մրցութային կարգով։	–	+	+	+
10.	Երևան քաղաքում կենդանիների շուկաների կառուցման նպատակով կկատարվեն ուսումնասիրություններ և կորոշվեն դրանց տեղակայման վայրերը և աշխատանքներ կտարվեն դրանց կառուցման համար։	–	–	+	+
11.	Առևտրի և սպասարկման օբյեկտների տեղաբաշխման և ոլորտի զարգացման ծրագրի և սխեմայի մշակում /մլն դրամ/։ :	–	–	20.0	–
12.	Թափառող կենդանիների վնասազերծման աշխատանքների իրականացում /մլն դրամ/	220.0	220.0	220.0	220.0
13.	Թափառող կենդանիների վնասազերծման աշխատանքների նկատմամբ հսկողության իրականացում։	+	+	+	+
14.	Թափառող կենդանիների վնասազերծման ոլորտի արդյունավետ կառավարման մեխանիզմերի մշակում, ինչպես նաև համապատասխան օրենսդրական դաշտի ձևավորում («Կենդանիների մասին»,Կենդանիների պաշտպանության մասին» ՀՀ օրենքների նախագծերի մշակման նպատակով առաջարկությունների ներկայացում)։	+	+	+	+
15.	Երևան քաղաքում թափառող կենդանիների կացարանի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում և կացարանի կառուցում	–	–	–	+